

յերի քաղաքակրթական պատմութիւննեց մի բան իմանալ կարողանայինք։ Այդպիսի աղբերներ գուցէ մեզ պեղումներն ընծեռնէին, որ դեռ չեն կատարուած։ Բայց դրաննեց ինչպէս ասացինք այս ձեռնարկից գուրս են հանուած այն բոլոր առանց պելներն ու աւանդութիւնները, որոնք վերաբերում են մեր հին շրջանին և որոնք այնքան սիրելի են մեզ։ Խթէ այս ձեռնարկը իրեւ գասագիրք գործածուի, այն ժամանակ մեր աշուկերտները պիտի ստիպուած լինին իրենց ուղեղը յոգնեցնել մի քանի անուններ և մի քանի պատերազմների նկատագրութիւններ սովորելով, միւս կողմեց նոքա ոչ մի տեղեկութիւն չէին ունենայ մեր նախնական շրջանին վերաբերող առասպելներից և աւանդութիւններից, որոնք թէպէտ պատմական նշանակութիւն չունին, բայց որոնցից շատերը մեր նախնական կուլտուրայի ընօրու տարրերն են կազմում։ Այստեղ ուրեմն հարց է ծագում։ Ի՞նչպէս պէտք է անցնել մեր միջնակարգ դպրոցներում հայոց պատմութեան այդ շրջանը։ Այս առթիւ թոյլ եւ տալիս ինձ հետեւեալ կարծիքը յայտնել։ Գուցէ նպատակայարմար լինէր, որ մեր միջնակարգ դպրոցներում այս ձեռնարկի հայերէն թարգմանութիւնը որոշ կրճատումներով կրտել դաշտագիրք գործածուէր մինչեւ ուսումնական տարուայ երրորդ երկամսնեկի վերջը, իոկ մնացած երեք տմում կարելի էր աշակերտին ծանօթացնել Հայկի, Արամի, Արայի, Վահագնի, Տիգրանի և ուրիշ առասպելների բովանդակութեան հետ և միջոց տալ նրանց, որ նրանք ամեն անդամ որոշել կարողանային, թէ իրենք դիցաբանական, դիւցազնական, պատմական ընտանեկան առասպելների, թէ դոցանից ոչ մէկի, այլ մի ուեէ միտումաւոր կեղծիքի հետ գործ ունեն։ Այս ձեռով աշակերտը ոչ միայն կծանօթանայ այդ առասպելների հետ, այլ և ձեռք կըերի քննադատական հայեացք։

Մ. Խոսթիեան

Альбертъ Вандаль-Армяне и Реформы. перев. М. Я. Алавердянцъ. С. П. 1908.

Թրանսիայի պատմաբան Ալբերդ Վանդայլի «Հայերը և տաճկակտն վերանորոգութիւնները» վերտառութեամբ զեկուցումը թարգմանել է Մ. Ալլահվերդեանը։ Առաջին անդամ՝ այդ զեկուցումը լրյս է տեսել 1897 թ. հայկական կոտորածներից յետոյ, երկրորդ անդամ 1903 թուին։

Ֆրանսիայի պատմաբանի այս զեկուցումը, որ կարգացուել է Փարիզի առաջնակարգ հասարակութեան առաջ, մի օրտաճմիկ տեսարան է բաց անում՝ ընթերցողի առաջ. նա նկարագրում է տաճկահայերի քաղաքական ծանր վիճակը, նոցա իրաւագուրկ կացութիւնը, 95—96 թ. կոտորածները, եւրոպական տէրութիւնների խոստումները, որոնք նոյն իսկ Բեռլինի 61 յօդ. մոռանալով թոյլ են տուել, որ տաճիկ կառավարութիւնը տաճկահայերի նկատմամբ ձեռք առած ճնշումները պարբերաբար շարունակի: Իւր զեկուցման վերջում նա կոչ է անում ունկընդիրներին քարոզել ամենայն տեղ Հայաստանի վաստակեալների և բեռնաւորների բաղդի ծանրութիւնը թեթևացնելու համար, որովհետեւ ֆրանսիական կառավարութիւնը և ժողովուրդը արեելեան քրիստոնեաների պաշտպան են համարւում:

Լ. Վ.

Ազգագրական Հանդէս: Եռամսեայ, խմբագրութեամբ ե. Լալայեանի և հրատ. Հայոց Ազգագրական Ընկերութեան: Լոյս տեսաւ Հանդիսի 1907 թ. ԽՎԼ. գիրքը, որ կազմած է հետաքրքրական բովանդակութեամբ: Զետեղուած նիւթերի մէջ ի միջի այլոց արժանի են ուշագրութեան. 1) Նոր-Բայազէտի գաւառ, ազգագրութիւն ե. Լալայեանի, 2) Հայ ժողովրդական վէպը. Մ. Աբեղեանի, 3) Հայ ժառանգական իրաւունքը Խ. Սամուէլեանի, 4) Էջմիածին և Հայոց հնագոյն եկեղեցիները—Մեսրովք վարդ. Տէր Մովսիսեանի, 5) Կաթողիկոսական յուղարկաւորութիւն և թաղումն. Գարեգին վարդ. Յովսէփեանի և այլն: Զետեղուած են նաև յաջող պատկերներ ու մի քանի մակարդակներ: Ամբողջ հատորը պարունակում է մօտ 240 երես:

Բ. Իշխանեան. — Թիւրքիայի ապագան, Թիֆլիզ, 1907, գինն է 10 կոպէկ. Ներկայ քննական էտիւտի մէջ հեղինակը փորձում է գիտական եղանակով որոշել